

ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀՈՒՆԱԿԱՆ «ՀԻԳՐԻԱ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Աթենքի «Մեսիմվրինի» օրաթերթի 1980 թ. օգոստոսի 5-ի համարում Ա. Դրոսոպուլոսը հոմաճայերին նվիրված իր հոդվածում զարգացնում է այն միտքը, թե հայերն ու հույները եղբայր ժողովուրդներ են: Հիրավի, իրերի պատմական բերումով նրանք դարեր շարունակ ունեցել են ընդհանուր ճակատագիր, քաղաքական և մշակութային կապեր և բարեկամական հարաբերություններ: Հատկապես օսմանյան վայրագ տիրապետության ժանր ժամանակաշրջանում ստրկական լուծը միասնական ուժերով ու ջանքերով թոթափելու անհրաժեշտությունը շատ լավ գիտակցեցին երկու ժողովուրդների առաջադեմ ու լուսավոր ներկայացուցիչները: Նրանք կյանքի կոչեցին այդ բարեկամական զգացումները, հակառակ թուրքական կառավարող շրջանների՝ հայ և հույն ժողովուրդներին թշնամացնելու քաղաքականություն: Դրա ամենավառ արտահայտությունը Կրետեի պատերազմի շրջանում (1645—1669 թթ.) հայերի, տվյալ դեպքում՝ բաղիշեցի Մահմետի Շահմուրատի ձեռք առած միջոցներն են: Նա կարևոր գործունեություն ծավալեց ֆրանսիական արքունիքում՝ վստահեցնելով Լյուդովիկոս XIV-ին, որ Օսմանյան կայսրության հույներն ու հայերը, եթե նրանց օգնություն ցույց տրվի, կթոթափեն թուրքական լուծը¹:

XVIII դարի երկրորդ կեսին հայ-հունական համագործակցության անհրաժեշտությունը գիտակցեց և հույն ժողովրդի լուսավոր դեմքե-

րից մեկը՝ թուրքական բռնատիրության դեմ պայքարի առաջամարտիկ Ռիզաս Ֆերեոս Վելեստինիսը (1757—1798 թթ.): Հույն ժողովրդի ազատագրական պայքարին և դրան հասնելու ուղիներին նվիրված իր բոցաշունչ «Լազմական երգ»-ում, որը նաև գործելու ծրագիր էր, նա գրում էր.

Բուլղարներ, ալբանացիներ, հայեր և հույներ, սևեր ու սպիտակներ, միահամուռ ավյուրով ազատության համար սուր կապենք...²:

Ապագա ազատ Հունաստանի իր կազմած «Սահմանադրության» 7-րդ և 122-րդ հոդվածներում Ռ. Ֆերեոսը իրավահավասարություն, խղճի ազատություն, ապահովություն է վերապահում Հունաստանի սահմաններում ապրող ժողովուրդներին, այդ թվում և հայերին³: 1821 թ. սկիզբ առած հույն ժողովրդի օսմանյան լծից ազատագրվելու պայքարը գլխավորած նշանավոր «Ֆիլիկի էտերիա» զաղտնի կազմակերպությանը անդամագրվել էին նաև հայեր, որոնք այդ ասպտամբության նպաստավոր ելքի հետ էին կապում հայ ժողովրդի ազատագրությունը⁴: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ դրված էր նաև Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը, հայերը թարգմանեցին և «Փոքը» ամսագրում

² Γ. Ι. Ζωϊόη, Ρήγας Βελεστινής, ὁ μεγάλος επαναστάτης-οημοχρατής, 1757—1798. Πολιτικές και λογοτεχνικές εκδόσεις, 1957, σελ. 219.

³ Նույն տեղում, էջ 193, 210:

⁴ См. Г. И. Арш. и Эгеристское движение в России (М. 1970) դրքի մասին Ս. Հակոբյանի գրած գրախոսությունը՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 247 և հտ.:

¹ Հ. Անասյան, Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (XVII դար), (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1954, № 3, էջ 95): Նույնի՝ XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 299:

հրատարակեցին Ռիգաս Զերեոսի ռեալմական երգը», որ արդիական էր հնչում հայ իրականության մեջ իր ստեղծվելուց մեկ դար անց։

Նոր ժամանակներում հայ-հունական բարեկամությունը վառ կերպով արտահայտվեց Թուրքիայի հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների ժամանակ։ Աբդուլ Համիդի, ապա Մեծ եղեռնի և 1922 թ. Զմյուռնիայի աղետից փրկված բազմաթիվ հայեր ապաստան գտան Հունաստանում, հույն ժողովուրդն իր համար դժվարին պայմաններում (երկրում ապաստանել էին Փոքր Ասիայի և Արևելյան Թուրքիայի շուրջ մեկ միլիոն հույն գաղթականներ) նրանց համար արեց հնարավոր ամեն ինչ։ Ահա այդ շրջանից սկսած հույն ժողովուրդը ավելի մեծ հետաքրքրություն հանդես բերեց իր երկրում հաստատված հայերի բազմադարյան պատմության ու մշակույթի հանդեպ։ Այդ բանն իր արտահայտությունը գտավ նաև լայն ընթերցող հասարակայնությունը հասցեագրվող հանրագիտարանային տիպի աշխատություններում։ «Էլեֆթերուֆիս» հրատարակչական տունը 1927—1931 թթ. հրատարակեց 12 ստվար հատորներից բաղկացած «Հանրագիտական բառարան»։ Պետք է նկատել, որ «Հայաստան» հոգվածն այնտեղ շատ խղճուկ է, ընդամենը երկու և կես էջ, «Հայ եկեղեցին»՝ կես էջ։ Հոգվածագիրներն էլ հայագիտության հետ որևէ առնչություն չունեն։ «Հայաստան» հոգվածը գրել է Նիկոլայոս Խաճիդակիսը, Աթենքի համալսարանի մաթեմատիկական անալիզի դասախոս, իսկ «Հայ եկեղեցին»՝ անհամեմատ ավելի մոտ կանգնած մի մասնագետ՝ Դ. Ս. Բալանսը, նույն համալսարանի կրոնի դասախոս։

«Էլեֆթերուֆիսի» հետ գրեթե միաժամանակ սկսեց լույս տեսնել «Պիրոս» («Ջահ») ամսուրը կրող «Հունական մեծ հանրագիտարան»։ Այն կազմեց 24 մեծագիր հատորներ։ Հայաստանին, նրա պատմությանն ու մշակույթին այս հանրագիտարանում շատ մեծ տեղ է հատկացված։ Նրա 5-րդ հատորում ղեկավարած «Հայաստան» հոգվածը կազմում է երեք սյունակից բաղկացած 18 մեծագիր էջ, «Հայ եկեղեցին»՝ 13 էջ, առանձին բաժիններ կան նվիրված հայոց լեզվին, գիր ու գրականությանը, մշակույթին, իրավունքին (ամբողջությամբ կազմում է շուրջ 11 մամուլ)։ Սակայն այստեղ էլ հոգվածագրերը հայագիտության հետ ուղղակի առնչություն չունեն։ «Հայաստան» հոգվածը (պատմություն, լեզու, գիր, գրականություն, իրավունք, մշակույթ) գրել է արտաքին գործոց նախարարության բաժնի վարիչ Ն. Մոսխոպուլոսը, ռազմական պատմությունը՝ գեներալ-մայոր Ն. Թ. Կլադասը, եկեղեցու պատ-

մությունը՝ Տրախիայի եպիսկոպոս Ալեքսանդրոս Զոտոսը։

1950-ական թթ. խնդրո առարկա հանրագիտարանը առանց որևէ փոփոխության վերահրատարակվեց, իսկ 1957—1963 թթ. որպես հավելված լույս տեսան 4 հատոր ևս։ Այնտեղ առաջին անգամ տրվում է «Հայաստանի Սովետական Հանրապետություն» հոգվածը (ընդամենը մեկնեկս սյունակ), որը ոչ ծավալով, ոչ բովանդակությամբ չի կարող բավարար համարվել (Տիգրան Զուխաջյանը, օրինակ, հիշատակվում է որպես սովետահայ նշանավոր բանաստեղծ)։ Հոգվածագիրն է լրագրող Օ. Իկոնոմիդիսը։

Այսպիսով, հակառակ հույն հասարակայնության բուռն հետաքրքրությանը՝ ընդհանուր պատկերացում ունենալ հայ ժողովրդի մասին, այդ բանը հնարավոր չէր առավել կամ պակաս շահով բավարար կատարել այն պարզ պատճառով, որ չկար հույն հայագետ։ Հույն հոգվածագիրները հայոց պատմությունն ու մշակույթը ճանաչելով երկրորդ, երրորդ ձեռքերից քաղած նյութերից («Հունական Մեծ Հանրագիտարանի» հայագիտական հոգվածների վերջում կցված գրականության բավականին երկար ցուցակում չկա և ոչ մի հայերեն գրված գործ։ Հոգվածներն ամբողջությամբ գրված են օտար հայագետների ուսումնասիրությունների հիման վրա), հակառակ իրենց գործադրած իսկապես մեծ ու գովելի ջանքերի, չէին կարող զգալի հաջողությունների հասնել։

Սովետական Հայաստանի հատկապես ետպատերազմյան շրջանի քաղաքական-տնտեսական հաջողությունները, գիտության ու մշակույթի աննախընթաց զարգացումը, այդ իրողություններում, այդ թվում և հունահայ գաղութում առաջացած ազգային վերելքը, է՛լ ավելի խթանեցին հույն ժողովրդի հետաքրքրությունը դեպի հայերը, նրանց պատմությունն ու մշակույթը։ Եվ պատահական չէ, որ 1978 թ. սկսած, հունական իրականության մեջ իր նախորդը չունեցող «Հիդրիա» («Սափոր») ամսուրը կրող «Հունական և համաշխարհային մեծ ընդհանուր հանրագիտարանի» (Υόρια, Έλληνική και Παγκόσμια Μεγάλη Γενική Έγκυκλοπαιδεία) ղեկավարները որոշեցին լայն տեղ հատկացնել Հայաստանին և հայ ժողովրդին։

«Հիդրիա» հանրագիտարանը նախատեսվում է հրատարակել 40 հատորով։ Այն ընդգրկելու է 600000 թեմա, 60000 դոսավոր լուսանկար և ըստ հրատարակչի հայտարարության ամբողջաշախու է ընդամենը երեք տարվա ընթացքում։ Նրա հեղինակային կոլեկտիվի ցուցակը հաշվում է գիտության ու մշակույթի հույն նշա-

նավոր գործիչների շուրջ 400 անուն: Գործը ղեկավարում է Ստավրոս Տավուարիսը:

«Հիդրիա» հանրագիտարանը հրատարակվում է միանգամայն նոր սկզբունքներով: Տպագրությունը, որ կատարվում է ամբողջովին կալենդարային թղթի վրա, գործ չունի գրաշարության հետ: Բնագիրը «շարվում է» ֆոտոսինթեզի մեթոդով: Բոլոր նկարները, քարտեզները գունավոր են (բացի անցյալում արված և ու սպիտակ լուսանկարներից, երբ գունավոր լուսանկարչություն գոյություն չուներ):

Հանրագիտարանի խմբագրությունը կատարել է մի նորամուծություն, որի համար ստացել է գյուտարարական դիպլոմ: Ժամանակ առ ժամանակ հրատարակվելու և հատուկ տնօրինված ժամանորոշիկներ են ուղարկվելու գրքի «նորոգված» էջը, այն էլ, որի վրա տպված այս կամ այն հոդվածը կրել է փոփոխություններ, կամ այնտեղ տրվել է նոր հոդված: «Նորոգումը» նկատի ունի 1) նորացված հոդվածներ, 2) լրացված հոդվածներ և 3) բոլորովին նոր հոդվածներ:

Անցնելով բուն նյութին նշենք, որ «Հիդրիա» հանրագիտարանը շատ լայն տեղ է հատկացնում Սովետական Միության ժողովուրդների պատմությանն ու մշակույթին, մի բան, որ նախորդ հանրագիտարաններում հազվագյուտ էր նկատվում: Հատկապես ճոխ ու հարուստ է հայագիտական մասը, որը վարում է հունահայ գաղութի աչքի ընկնող գործիչ, Հայկական բարեգործական ընդհանուր միության Հունաստանի մասնաճյուղի պատասխանատու քարտուղար Հայկ Ղադարյանը: Հայագիտական հոդվածները սյուրսոստելիս Հայկ Ղադարյանը լայնորեն օգտվում է սովետահայ գրականությանից, այդ թվում և Հայկական սովետական հանրագիտարանի նյութերից: Ինչպես ստորև ցույց կտրվի, նա ջանում է հնարավորին չափ հանգամանորեն ներկայացնել հայոց պատմությունն ու աշխարհագրությունը, մշակույթն ու գիտությունը՝ սկզբից մինչև մեր օրերը: Նա զգալի տեղ է հատկացնում նաև սփյուռքահայության նշանավոր գործիչներին:

Մինչև օրս լույս են տեսել «Հիդրիայի» 12 հատոր, որոնք ընդգրկում են հունարեն «Ա» տառով սկսվող հոդվածները (XII հատորի II կեսը բովանդակում է «В» («В») տառով սկսվող հոդվածներ, այդ թվում ավելի քան տասը՝ հայկական բովանդակությամբ):

Քանի որ այլ կերպ հնարավոր չէ հայ ընթերցողին ցույց տալ, թե Հայկ Ղադարյանը հանրագիտարանի լույս տեսած 12 հատորների էջերում ինչ լայնությամբ ու խորությամբ է հույն ընթերցողին ներկայացրել Հայաստանն ու հայ ժողովրդին, նպատակահարմար ենք

գտնում պարզապես թվարկել (հունարեն այբուբենի հերթականությամբ) յուրաքանչյուր հատորում առկա հայագիտական հոդվածները, առանձին դեպքերում մեզ թույլ ենք տալիս կատարել փոքր ճշտումներ:

Հատոր առաջին

Ավանետով վառված (պետական ու կուսակցական գործիչ), Ավանետով Ռ. (սովետական լեզվաբան), Ավարայրի ճակատամարտ, Աղայան Ղազարոս (մեծագիր լուսանկարող), Ագաթանգեղոս, Աղամիրով Գ. Գ. (օդաչու, Սովետական Միության հերոս), Աղաբաբ Հակոբ Բեթանի (գրող, մանկավարժ), Աղաբաբյան Գրիգոր Գարեգինի (սովետահայ ճարտարապետ), Աղաբաբյան Սուրեն Բարդուղի (գրականագետ, քննադատ), Աղաբաբով Գարեգին Հարությունի (ինժեներ), Աղանյան Գյուտ Բահանա (պատմաբան, մանկավարժ), Աղանբեկյան Աբել Գյուղի (տնտեսագետ), Աղանուր (Աղանուրյան) Վիկտորիա (հայագիտական իտալական բանաստեղծուհի), Աղասյան Վարսենիկ Գրիգորի (սովետահայ բանաստեղծուհի), Աղասյան Գրիգոր Խորենի (սովետահայ նկարիչ), Աղասյան Աստղիկ Ալեքսանյի (դերասան և ռեժիսոր), Աղաջանյան Գրիգոր-Պետրոս (կարգիչ), Աղաջանյան Պավել Արտեմի (սովետահայ ռազմական գործիչ), Աղաջանյան Ստեփան Մելիքսեթի (սովետահայ նկարիչ), Աղաթոն (Աղաթոնյան) Գրիգոր (1825—1868 թթ. հասարակական գործիչ), Աղախանյան Գրիգոր Աշոտի (սովետահայ ինժեներ), Աղախանյանց Օկմիր Եղիշի (սովետահայ աշխարհագրագետ), Աղայան Էդվարդ Բագրատի (սովետահայ լեզվաբան), Աղայան Մուշեղ Ղազարոսի (կոմպոզիտոր), Աղայան Մատուր Պավելի (պատմաբան), Ականց անապատ (Ակների վանք), Աղաջանով Սուրեն Իվանի (ռազմական գործիչ), Ակինյան Ներսես Հակոբի (բանասեր, պատմաբան, ձեռագրագետ), Հակոբ կաղմոդ (XVI դար), Հակոբ-Հովհաննես (XVII դարում Հոռմում ապրած հայ հոգևորական), Հակոբյան

5 Այս հոդվածի հեղինակն է Գ. Գ. Պապազիմիտրոպուլոսը, որը հոդվածը գրել է վաղուց հնացած տվյալների հիման վրա: Ագաթանգեղոսին նա հավարտում է հոռմական ծագումով, IV դարի հայ պատմագիր, գտնում է, որ աշխատության մի մասը գրել է ուղղակի հունարեն կամ լատիներեն և մի դար անց այն թարգմանվել է հայերեն: Ցույց է տալիս, որ բնագիրը առաջին անգամ հրատարակեցին Վենետիկի Մխիթարյանները 1835 թ., այնինչ այն լույս տեսավ Կոստանդնուպոլսում դեռևս 1709 թ.:

Հակոբ (բանաստեղծ, մեծադիր գունավոր նկարիչ), Ակոպով Հակոբ Մինասի (սովետահայ բանդակագործ)։

Հատոր երկրորդ

Աղբյուրիկ վարդապետ (XIII դարի ճարտարապետ), Աղբյուրյան Նիկոլ Պողոսի (բանասեր, մանկավարժ, բաղադրական գործիչ), Աղբիանոսյաններ (Հոգևորական տոհմ, IV—V դդ.), Աղթամար կղզի, Աղթամի (Աշտարակի շրջանի կիկլոպյան ամրոց և բնակավայր), Աղձնիք։

Հատոր երրորդ

«Աղատ» (սոցիալական տերմին), Աղարյան Ալիկ (մարմնամարդիկ), Աղնավուր Շարլ (ֆրանսահայ երգիչ), Ալվազովսկի Հովհաննես (ծովանկարիչ, «Իններորդ ալիքը» գունավոր նկարով), Ալվազովսկի Գաբրիել (մանկավարժ, պատմաբան, եկեղեցական գործիչ)։

Հատոր չորրորդ

Այտրեյան Արսեն (Մխիթարյան լեզվաբան, բանասեր), Այրարատ (նահանգ), Ակազեմիա գիտությունների (Սովետական Հայաստանի)։

Հատոր հինգերորդ

Ագարակ (ավան Մեղրու շրջանում), Ագոնց Ստեփանոս (Մխիթարյան արքայապետ), Ալավերդի (քաղաք), Ալավերդյան Ստեփան Կարապետի (տնտեսագետ, հեղափոխական գործիչ), Ալազան վահրամ Մարտիրոսի (սովետահայ գրող), Ալաբյան Կարո (ճարտարապետ), Ալաջաջյան Ստեփան (սովետահայ գրող), Ալյանար Հրանտ Հովսեփի (ֆրանսահայ նկարիչ), Ալեմշահ Գուրգեն Միքայելի (հայ կոմպոզիտոր), Ալեքսանյան Գառնիկ Լեվոնի (ֆրանսահայ երկրաֆիզիկոս), Ալեքսանյան Տիրան Հովհաննեսի (թավջութակահար, կոմպոզիտոր), Աղեքսանդր Ա Ջուղայեցի (կաթողիկոս)։

Հատոր վեցերորդ

Ալիշան Ղևոնդ (մեծադիր նկարիչ), Ալիխանյան Արտեմ Իսահակի (սովետահայ ֆիզիկոս), Ալիխանյան Իսահակ Սիմոնի (1876—1946), ղերասան), Ալիխանով Աբրահամ Իսահակի (սովետահայ ֆիզիկոս), Ալավերդյան Քրիստափոր Նիկողոսի (սովետական ռադիական գործիչ), Ալմուխյան Ժան (սիվուռքահայ կոմպոզիտոր), Ալպոյաճյան Արշակ (սիվուռքահայ պատմաբան), Ալիասյան (Փանոսյան) Ալեքսանդր (1859—1919 թթ., հայ բանաստեղծ), Ալթունյան Թաթև, Ամատունի Սահակ Գևորգի (բաղադրանգի), Ամարա Լուսին (ամերիկահայ երգչուհի)։

Հատոր յոթերորդ

Ամերիկյան Յուլի (ժող. դերասան)։ Ամիրդովյաթ Ամասիացի (բժիշկ), Աբամելիք Դավիթ (իշխան), Աբամելիք-Հազարյան Սիմեոն

(իշխան), Համբարձումյան Վիկտոր (ակադեմիկոս), Համբարձումյան Ռուբեն Սերգեյի (մետաղաբան), Աբաս Բագրատունի (հայոց թագավոր), Աբելյան Հովհաննես (դերասան), Ամբերդ, Ամրիկյան (Ամերիկյան) Միհրդատ (դերասան), Անանիա Շիրակացի, Անանյան Վախթանգ (գրող), Անանյան Պողոս Գրիգորի (Մխիթարյան փիլիսոփա, աստվածաբան, բանասեր), Անանիա Նարեկացի, Անանիկյան Մարտիրոս Հարությունի (ամերիկահայ բանասեր, լրագրող)։

Հատոր ութերորդ

Անի քաղաք, Անիպեմզա, Հանբարձումյան Վիկտոր (ակադեմիկոս)՝, Աղամյան Նորա (գրող), Աղամյան Հովհաննես (գունավոր հեռուստատեսության դյուտարար), Աղամյան Պետրոս (դերասան), Անթիլիաս։

Հատոր իններորդ

Աղոնց Նիկողայոս, Անդրանիկ (Օդանյան, մեծադիր նկարիչ), Անդրեասյան Անդրանիկ (ամերիկահայ լրագրող, խմբագիր), Անտոնյան Հակոբ (սիվուռքահայ բանաստեղծ), Անտոնյան Արամ (սիվուռքահայ բանասեր, պատմաբան, լրագրող), Աբելյան Մանուկ, Աբելյան Մհեր (նկարիչ), Ապետիկ Պետրոս (XVI—XVII դդ., դիվանագետ Հոմի պապի մոտ), Աբգարյան Սեպուհ (սիվուռքահայ երաժիշտ, երգիչ, կոմպոզիտոր, գունավոր նկարիչ), Աբովյան Խաչատուր։

Հատոր տասներորդ

Աբրահամ Աղրաթանեցի (կաթողիկոս), Աբրահամ Բաղիշեցի (կաթողիկոս), Աբրահամ Կրետացի (կաթողիկոս) Արաղի Մովսես, Արա Գեղեցիկ, Առաքել ծաղկող (XIV դար), Առաքել Գեղամեցի (XVII դարի գրիչ և մանրանկարիչ), Առաքել Բաղիշեցի (տաղերգու, մատենագիր), Առաքել Սյունեցի (տաղերգու, փիլիսոփա), Առաքել Դավրիժեցի (պատմիչ), Առաքել Տարոնացի (XIV դարի գրիչ, ծաղկող), Առաքելյան Արտաշես Արշակի (տնտեսագետ), Առաքելյան Բարկեն Նիկոլայի (պատմաբան, հնագետ), Առաքելյան Սեդրակ (նկարիչ, նրա «Գարուն» գունավոր նկարի վերարտադրություն), Արամ Նահապետ, Արաքս գետ, Արաքսյան (Քալանթարյան) Պողոս (դերասան,

6 «Համբարձումյան Վիկտոր» հոդվածը շատ համառոտ տրված է 7-րդ հատորում։ Հանրագիտարանի խմբագրությունը, ցանկանալով ավելի հանգամանորեն շարադրել այն, դիմեց ազգանվան մի փոքր աղավաղման, որպեսզի այս՝ 8-րդ հատորում դարձյալ անդրադառնա և «Հանբարձումյան» (Հանբարձումյան)՝ ձևով տվեց ընդարձակ հոդված՝ գիտնականի լուսանկարով։

առնչվող, թատերական գործիչ), Արաքսամյան Ալեքսանդր (դրամատուրգ, թատերագիր), Արաբկիր (քաղաք), «Արարատ» (ֆուտբոլային թիմ), Արարատ (լեռ, մեծագույն գունավոր նկարով), Արարատյան դաշտ, Արարատ (արեգակնային էներգիայի կայան), Արարատյան Հարություն (գրող), Արածանի (գետ), Արգիշտի I, Արգիշտիիսինի (քաղաք), Արեշյան Գրիգոր (բժիշկ), Արզումանյան Անուշավան (տնտեսագետ), Արզումանյան Գրիգոր (կուսակցական, պետական գործիչ) Արիստակես Բ Աթոռակալ (XV դարի Աղթամարի կաթողիկոս), Արիստակես (XII դարի գրիչ, բառարանագիր), Արիստակես Ա (կաթողիկոս, Գրիգոր Լուսավորչի որդին), Արիստակես Սեբաստացի (XIV—XV դդ. գրիչ, կաթողիկոս), Արիստակես Լաստիվերտցի (պատմիչ), Արլեն Մայլ (Տիգրան Քուլումբյան, անգլիացի հայագետ գրող), Արմավիր (քաղաք), Արտաշատ (քաղաք), Արտաշես Ա, Արտաշես Բ, Առուշանյան Բագրատ (գեներալ), Առուշանյան Շմավոն (կուսակցական, պետական գործիչ), Արուստյան Մ. Ա. (նկարիչ), Արուստյան Սարգիս (բեմանկարիչ), Արուստյան Սերգեյ (նկարիչ), Արփիարյան Արփիար (գրող):

Հատուր տառնեկերոդ

Արշակունիներ (հարստություն), Արշակ (թագավորներ), Արշամ (հայոց թագավոր), Արսենյան Սեթ (սփյուռքահայ հոգեբան, մանկավարժ), Արսյան Վարդ (խալհաճայ բժիշկ, բանասեր, պատմաբան), Արտավազդ (հայ. թագավորներ), Արդվին7, Արծրունիներ (նախարարական տուն), Արծրունի Անդրեաս (երկրաբան), Արծրունի Գրիգոր (հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր), Արթիկ (քաղաք), Արթիկյան Արթին (սփյուռքահայ նկարիչ, փորագրիչ), Ասատուր Զաքե (գրող, մեծագույն նկարիչ), Ասատուր Հրանտ (գրող, հասարակական գործիչ), Ասատուրյան Հակոբ (սփյուռքահայ բանասեր, երգիչ, կոմպոզիտոր), Ասլամազյան Սարգիս (թավջութակահար), Ասլան (Ասլանյան) Աննա (ռոմինաճայ գիտնական-գեոդեզիոց), Ասլան Գրեգուար Գալուստի (ֆրանսահայ կինոդերասան), Ասլան (Ասլանյան) Ռաուլ (ավստրալիացի դերասան, բեմադրող), Ասլանյան Աշոտ (երկրաբան), Ասլանյան Գարեգին (կինոպերատոր), Համիկ (դերասանուհի), Աշոտ (հայ Բագրատունի թագավորներ), աշուղ, Ասպուրակես Մանգլիկերտցի (կաթողիկոս), Ասրյան Արտու (դերասանուհի), Աշտիշատ (քաղաք), Աստվածատուր Համադանցի (կաթողիկոս), Աստվածատուր Եղե-

սացի (գրիչ, ծաղկող), Աստվածատուր Ներսեսովիչ (մանկավարժ, բառարանագիր, աստվածաբան), Աստղիկ (Քանթարչյան, դերասան), Աստուրյան Հարություն (սփյուռքահայ պատմաբան), Ադամյան Կարապետ (սփյուռքահայ նկարիչ), Ադամյան Պետրոս (դերասան), Ադամյան Հովհաննես (գունավոր հեռուստատեսության գյուտարար), Աթաբեկյան Լևոն (1875—1918 թթ., հասարակական գործիչ, բժիշկ, բանաստեղծ), Աթաբեկյան Գևորգ (հասարակական-քաղաքական գործիչ), Աճառյան Հրաչյա, Աճեմյան Վարդան (դերասան, բեմադրող), Աճեմյան Գևորգ (սփյուռքահայ գրող), Աճեմյան Մկրտիչ (1833—1917 թթ., բանաստեղծ), Աճեմյան Հարություն (սփյուռքահայ նկարիչ), Աճեմյան Հովհաննես (1840—1895 թթ., երգիչ), Աճեմյան Հովհաննես Հարությունի (1828—1871 թթ., դերասան), Աթմաճյան Մարի (սփյուռքահայ բանաստեղծ, գրող, հասարակական գործիչ), Աջապահյան (կաթողիկոսներ Մեծի տանն Կիլիկիո), Ադգարյան Գառնիկ (սփյուռքահայ գրող, բանասեր, խմբագիր):

Հատուր տառնեկերոդ

Աֆեյան Պողոս (1924—1969 թթ. բուլղարահայ բեմադրող), Աֆրիկյան Էվրիկ (սովետահայ կենսաբան-մանրէաբան, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ), Ահարոնյան Ավետիս (գրող, քաղաքական գործիչ), Ահարոնյան Գերսամ (սփյուռքահայ հրապարակախոս, հասարակական գործիչ), Հախվերդյան Գևորգ (1818—1866 թթ., գրող, տնտեսագետ, հասարակական գործիչ), Ախիջանյան Աղադար Դի խաչիկ (1690—1750 թթ, հայ ռազմական գործիչ), Ախուրյան (գետ), Աղթամար:

Տասներորդ հազարամյակի մեծնախնդարձակ հողավածը «Հայաստան» է (Արմենիա), որ կազմում է 18 էջ: Հողավածագիրն սկսում է այն հին քարի դարի շնչյան և աշելյան շրջանի քարե գործիքների հայտնագործությունից, խոսում նոր քարի դարի, բրոնզի դարի մասին, հանգամանորեն կանգ առնում Սեվանի ավազանում (Լճաշենում) բրոնզեդարյան դամբարանադաշտի պեղումների վրա, որից հետո պատմում Ուրարտուի ստրկատիրական պետության առաջացման, զարգացման, անկման, նրա ավերակների վրա հանգես եկած հայկական ցեղային միությունների, Արեմեյան պետության, Ալեքսանդր Մակեդոնացու, Սելևկյանների կայսրությունների շրջանի Հայաստանի, Երվանդունիների, Արտաշիսյանների, Արշակունիների հայկական պետությունների մասին, Հայաստանի առաջին բաժանման՝ Հռոմի և Պարսկաստանի միջև, ապա արարների կողմից

7 Հողավածագիրն է Վ. Թ. Ստավրիդիսը:

Հայաստանի նվաճման, օտար լծի դեմ հայ ժողովրդի պայքարի, աշխատավորների կեղերման, պալիկյանների ու թոնդրակեցիների դրոշի ներքո հանդես եկած սոցիալական պայքարի մասին, Անցնելով հայոց պետականության վերականգնման հարցին, հեղինակը ցույց է տալիս այդ շրջանում քաղաքների ծաղկումը, բայց և ներքինողական պայքարի ծանր հետևանքները երկրի միասնությունը քայքայելու գործում, որով հեշտացավ նախ բյուզանդական, ապա սելջուկյան, թաթար-մոնղոլական նվաճողական քաղաքականությունը: Ներկայացվում է սկիզբ առած հայոց արտագաղթը և դրանով պայմանավորված Կիլիկիայի հայկական պետության առաջացումը: Հեղինակն այնուհետև ցույց է տալիս Հայաստանի պարսկա-թուրքական պատերազմների թատերաբեմ դառնալը, հայ ժողովրդի ծանր վիճակը, խոստով հայ ժողովրդի ազատագրական փորձերի, Իսրայել Օրու առաքելության, Դավիթ-Բեկի մղած ազատագրական պատերազմների մասին և այլն:

Այնուհետև հոդվածում խոսվում է Արեւելյան Հայաստանի ուսական պետության կազմի մեջ մտնելու, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կարսի ու Արդահանի ազատագրության մասին և ընդգծում, որ «Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին փրկեց հայ ժողովրդին ամբողջական ոչնչացման վտանգից: Այս շրջանից Արեւելյան Հայաստանը թևակոխեց իր պատմության նոր փուլը»:

Հուլիսի 20-ին արձարծում է Հայաստանում ցարիզմի քաղաքականության, այս շրջանում հուլիսի 20-ին եկած դեմոկրատական շարժման (որի արտահայտություններից մեկը եղավ Միքայել Նալբանդյանը) հարցերը: Խոսելով 1870 թ. ագրարային ռեֆորմի մասին Հայաստանում, հեղինակը մատնանշում է Հայաստանի կապիտալիզմի շրջանը թևակոխելը: Այնուհետև պատմվում է Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների, Արևմտյան Հայաստանում սկսած ազատագրական շարժումների, հայկական տարբեր կուսակցությունների առաջացման, Առաջին համաշխարհային պատերազմի, հայոց Մեծ եղեռնի, հայերի նկատմամբ արևմտյան պետությունների երկպիմի ու խաբեպատիր քաղաքականության, հայկական սփյուռքի առաջացման մասին:

Հուլիսի 20-ին այնուհետև անդրադառնում է ուսական փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխություններին, այդ շրջանում Անդրկովկասում ստեղծված իրավիճակին, Անդրկովկասյան Սելմի հիմնադրմանը, թուրքական բանակի ղեկավար Հայաստան առաջնադասանը, Ղառաքիյիսայի, Բաշ Ասպարանի և Սարգարապատի

հերոսամարտերին, Անդրկովկասում հիմնադրված ազգայնական կառավարություններին և, վերջապես, սովետական իշխանության հաստատմանը, 11-րդ բանակի օգնությանը:

Խոսելով հունական բանակի կրած ծանր պարտության մասին Փոքր Ասիայում 1922 թ., Հայկ Ղազարյանը ցույց է տալիս, որ Փոքր Ասիայի հույն բնակչության հետ միասին շուրջ 100 000 հայեր ապաստան գտան Հունաստանում, որտեղ նրանք ստիպվել են գուրգուրանքով ընդունվել հունական պետության ու ժողովրդի կողմից, հակառակ այն տխուր իրավիճակի, որ տիրում էր Հունաստանում՝ կապված այդ պարտության և Հունաստանում շուրջ մեկ միլիոն հույն գաղթականների առկայության հետ: Հեղինակն ընդգծում է, որ հույն ժողովրդի այս աղնիվ վերաբերմունքը ղեկավար հատակ հայ ժողովուրդը իր խոր կնիքն է թողնել այդ հայ գաղթականների հիշողության վրա»:

Առանձին բաժին է կազմում Սովետական Հայաստանի պատմությունը՝ Անդրֆեբրուարյան ստեղծումը և 1936-ից Հայաստանի առանձին սովետական սոցիալիստական հանրապետության ստեղծումը, նոր սահմանադրության ընդունումը, ցույց է տրված, որ «Հայաստանում սովետական կարգերի հաստատումից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, սոցիալիստական պետությունը և ամբողջ հայ ժողովուրդը, ՍՍՀՄ-ի մյուս ժողովուրդների օգնությամբ, գերմարդկային ճիգերով պայքարեց ավերված երկրի ու նրա տնտեսության վերականգնման համար»: Այստեղ պատմվում է երկրի արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, մշակույթի զարգացման մասին և այլն:

Հեղինակը անդրադարձել է Հայրենական պատերազմում հայ ժողովրդի ակտիվ մասնակցությանը, սփյուռքի՝ Հայաստանին ցուցաբերած օգնությանը և նրա գործոն մասնակցությանը ֆաշիզմի դեմ ծվրոպայում բռնկած դեմոկրատական շարժման մեջ: Համառոտակի տրվում է Սովետական Հայաստանի զարգացման պատկերը ետպատերազմյան տարիներին:

Հայկ Ղազարյանն առանձին հոդվածներ է նվիրել Հայաստանի բնությանը, կլիմային, բնակչությանը, ժողովրդական տնտեսությանը, արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը և տրանսպորտին: Խոսելով բժշկության, առողջապահական հիմնարկությունների ու բուժօգնության մասին, նա շատ մանրամասն տալիս է բժշկագիտության պատմությունը Հայաստանում հնագույն ժամանակներից սկսած և հատուկ

Ֆլանգ է առնում բժշկագիտության զարգացման վրա սովետական տարիներին (բժշկական ուսումնական հաստատությունների հիմնադրում, հիվանդանոցների, սանատորիաների ու հանգրստյան տների լայն ցանցի ստեղծում, սպորտի զարգացում)։

Ընդարձակ բաժին է հատկացված գիտություններ, Այստեղ տրվում է գիտության զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից սկսած, Ռուսաստանում և եվրոպական երկրներում հայկական գիտական օջախների առաջացումը և այլն, և շատ հանգամանքներ՝ գիտության զարգացումը Սովետական Հայաստանում (Համալսարան, Արմֆան, Գիտությունների ակադեմիա)։ Խոսվում է քիմիայի, երկրաբանության և հատկապես 1946 թ. հիմնադրված Բյուրականի աստղագիտարանի, նրա ղեկավար ակադ. Վ. Հ. Համբարձումյանի ու նրա աշխատակիցների կատարած մեծ աշխատանքի մասին, որոնք «համաշխարհային ճանաչում գտան և մեծ ազդեցություն ունեցան ժամանակակից աստրոֆիզիկայի և աստղաբաշխության զարգացման վրա»։ Ֆիզիկայի զարգացման գործում մեծ դեր են խաղում Երևանի համալսարանն ու Պոլիտեխնիկական ինստիտուտը, կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության Արագածի գիտական կայանը, Երևանի էլեկտրոնային արագացուցիչը։ Խոսվում է էլեկտրոնիկայի և ռադիոֆիզիկայի բնագավառում գիտությունների ակադեմիայի կատարած մեծ աշխատանքի, կվանտային գեներատորների ստեղծման մասին և այլն։ Ցույց է տրված, թե ինչպիսի մեծ զարգացում են ապրում մաթեմատիկական և ֆիզիկոմաթեմատիկական գիտությունը, հիշատակվում է հիդրոէլեկտրակայանների ստեղծումը (Սևան-Հորազդան կասկադը), Հերկի մասին գիտություն, օրգանական, անօրգանական քիմիայի ու բիոքիմիայի, կենսաբանության, բուսաբանության, կենդանաբանության, հիդրոպոնիկայի առաջընթացը։

Հատուկ բաժին է նվիրված մշակույթին։ Հեռիկակեր տալիս է հայկական մշակույթի պատմությունը սկսած նախապատմական ժամանակաշրջանից, առանձնապես կանգ է առնում դրա զարգացման միջնադարյան շրջանի վրա՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայկական գրերի գյուտից հետո։ Նախամաշտոցյան հայկական մշակույթի վրա կանգ առնելով, հեղինակը խոսում է հին հայկական թատրոններում հույն ողբերգականների գործերի ներկայացման, Արտավազդ Ա-ի հունարեն լեզվով գրած ողբերգությունների, հայ գուսանների և նրանց երգած էպիկական ստեղծագործությունների մասին։ Հաջորդ հատվածը վերաբերում է հայկական գրերի գյուտից հետո Հայաստանում մշակույթի ծաղկ-

մանը՝ մինչև արաբական լծի հաստատումը, ապա Բագրատունյաց շրջանի հայկական պետության, կիլիկյան ժամանակաշրջանի, ու միջնադարյան մշակույթին, հայկական տպագրությանը և այլն։ Այնուհետև հեղինակը կանգ է առնում XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի հայ գաղութներին՝ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը զարթեցնելուն ուղղված ջանքերի, XIX դարի երկրորդ կեսին հանդես եկած նոր հոսանքների վրա։ Մանրամասն խոսվում է սովետական շրջանի գրողների և բանաստեղծների, Հայրենական պատերազմի տարիներին նրանց հայրենանվեր գործունեության, հայկական սովետական գրականության բարերար ազդեցության մասին սփյուռքահայության գրական-դեղարվեստական կյանքում։

Կերպարվեստի հարցերին անդրադառնալով, Հ. Ղազարյանը շարադրանքն սկսում է նախապատմական շրջանից, հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված իրերի նկարագրությունից (խեցեղեն, քարե վիշապներ, բրոնզե իրեր և այլն), խոսում Արինբերդի, Կարմիր բլուրի, Գառնիի պեղումների արդյունքների մասին։ Անցնելով քրիստոնեական շրջանին, նա կանգ է առնում եկեղեցիների որմնակարների, խճանկար հատակների, քանդակագործության (Զվարթնոց, Հաղբատ, Սանահին, Աղթամար), խաչքարերի, մանրանկարչության, Անիի և Դվինի խեցեղենի, փայտաքանդակի վրա և այլն։ Հայկական կերպարվեստի զարգացման նոր շրջանը սկսվում է Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո։ Հեղինակը նախ և առաջ խոսում է XIX դարի հայտնի նկարիչների և նրանց ստեղծագործությունների մասին։ Անդրադառնալով սովետական շրջանին նա, բացի նկարիչներից, հիշատակում է նաև քանդակագործներին և նրանց գործերը։

«Հոգևոր-մշակութային կենտրոններ» ընդհանուր վերնագրի տակ խոսք է լինում դպրոցների մասին, որ Հայաստանում հիմնադրվեցին հայկական գրերի գյուտից հետո։ Բացի Հայաստանում և Անդրկովկասում հիմնադրված դպրոցներից, հեղինակը հիշատակում է նաև Կոստանդնուպոլսի և Վենետիկի ուսումնական կենտրոնները և նրանց գործունեությունը։

Հայկական ճարտարապետության պատմությունը Հայկ Ղազարյանը սկսում է Շենգավիթից և Ուրարտուից, խոսում Արտաշատի և Տիգրանակերտի ավերակների, Գառնիի տաճարի, Դվինի, Զվարթնոցի և Արուսի աշխարհիկ շենքերի, Քասաղի և Երեբունյեի բազիլիկաների, հետագա շրջանի հոգևոր ու աշխարհիկ շեն-

քերի մասին (եկեղեցիներ, պանդոկներ, գրադարաններ, բարավանատներ և այլն)։ Օտար տիրապետության ժամանակ ընդհատված ճարտարապետական գործունեությունը վերսկսվեց Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո և իր զագաթնակետին հասավ սովետական կարգերի օրոք՝ աղգային ոճի լայն օգտագործմամբ։

Անցնելով երաժշտությանը հեղինակը գրում է հնագույն մոնոդիկ երաժշտության, գուսանների երգերի, իսկ Հայաստանում քրիստոնեության մուտք գործելուց հետո՝ եկեղեցական երաժշտության (շարականներ, զանգեր, ավետիսներ և այլն) մասին, ապա կանգ առնում գեղջկական, ժողովրդական, ավելի ուշ՝ տաղերի, օտար տիրապետության շրջանում՝ պանդուխտական, աշուղական երգերի, ժողովրդական երաժշտական գործիքների վրա և այլն։

XIX դարում սկիզբ է առնում հայկական երաժշտական մշակույթի մի նոր շրջան, լույս են տեսնում երաժշտական հանգաններ, ստեղծվում է հայկական առաջին օպերան։ Մեծ ջանասիրությամբ հավաքվում են հայկական ժողովրդական երգերը, ստեղծվում երգչամբեր։ Դրվում են հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմքերը։ Բացի սովետական կոմպոզիտորներից, երաժշտագետներից, կատարողներից, հեղինակը ներկայացնում է նաև սփյուռքահայ դործիչներին։ Նա չի մոռանում նաև օպերային և երաժշտական կոմեդիայի թատրոնները, ֆիլհարմոնիան, երգչախմբերը, կամերային անսամբլները, կվարտետները, կոնսերվատորիան, ժողգործիքների անսամբլը, երաժշտական դպրոցները, գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի երաժշտության և ժողովրդական երաժշտության բաժինները։

«Թատրոն» վերնագրով հոգվածը նվիրված է հնագույն հայ թատրոնին, «ձայնարկուներին», «ողբերգակներին» և «կատակերգակներին», Տիգրանակերտի և Արտաշատի թատրոններին, Արշակ II-ի արքունիքում կազմակերպված թատերական ներկայացումներին, միջնադարյան Հայաստանի թատրոնին, XVII—XIX դդ. Անդրկովկասում և հայ գաղթավայրերում հիմնադրված, սովետական շրջանում Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում կազմակերպված թատրոններին։

Մամուլ։ Մեծ Գյուտենբերգի գյուտից ընդամենը 62 տարի անց հայերն ունեցան իրենց առաջին տպագիր գիրքը՝ «Պարզատոմարը», որ լույս տեսավ Վենետիկում 1512 թ.։ Բազմաթիվ հայկական տպարաններ հիմնվեցին Կոստանդնուպոլսում, Հոռոմում, Փարիզում, Լայպցիգում, Նոր Զուղայում, Վենետիկում, Էջ-

միածնում, Մադրասում, Ամստերդամում, ապա և Երևանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաքվում և այլուր։ Այստեղ հորվածագիրը խոսում է հայկական կարևոր պարբերականների («Բազմավեպ», «Հյուսիսափայլ», «Մեղու Հայաստանի», «Մառյաց աղավնի», «Մեղու» և այլն), Թիֆլիսում լույս տեսած հայկական թերթերի մասին։ Ենչուովում են մամուլի ասպարեզում Սովետական Հայաստանի ձեռք բերած հսկայական հաջողությունները։ Առանձին խոսվում է Կինոյի, կրկեսի, ռադիոյի ու հեռուստատեսության, նրանց զարգացմանը իրենց մասնակցությունն ունեցած բազմաթիվ գործիչների մասին և այլն։

Հանրագիտարանի «Հայաստան» հոդվածը ունի «Վերջաբան», որից մի հատված բերում ենք ստորև.

«Հայ ժողովրդի դարավոր կենսունակությունը, վերջին վաթսուներորդի դարում նրա արևելյան հատվածի գոյծադրած գերմարդկային ճիգերը, հատվածի, որ թուրքերի զազանություններից փրկվելու համար ընդունեց Սովետական Ռուսաստանի օգնությունը և 1920 թ. ձևավորվեց որպես ՍՍՀՄ-ի 16 հանրապետություններից մեկը, նրան հասցրեց այնպիսի առաջադիմություն, որ նա ոչ ինչ չունի նախանձելու մեծ ու գերհզոր տերություններին։ Այսօր, հուրախություն նախաճի համայն հայության, շուրջ 30 հազար քառակուսի կիլոմետր տարածություն և երեք միլիոն բնակչություն ունեցող փոքրիկ Հայաստանը, գիտության և տեխնիկայի իր անվանի ներկայացուցիչներով, մասնակից է դառնում մարդկության բոլոր մեծագործություններին (էլեկտրոնային հաշվիչ մեքենաներից սկսած մինչև տիեզերական թռիչքները)։ Միլիոնաչափությունն այժմ իրեն զգում է ապահով քան երբեք, քանդի դժբախտության դեպքում նա անպաշտպան չէ...»։

«Հայաստան» հոդվածին կցված են բազմաթիվ մեծագիր գունավոր նկարներ ու բարոնեզներ (Սովետական Հայաստանի գերբը, «Մալթ Հայաստան» հուշարձանը, Երևանի համայնապատկերը, Արարատի, Սևանի, ակադեմիկոս Վ. Համարձումյանի, Էջմիածնի վանքի ոսկե տառերի, Մատենադարանի երեք մանրանկարների, Սուրբ Ղազարի վանքի զանազանից երկու նմուշների, Գառնիի հեթանոսական տաճարի, Զվարթնոցի ավերակների, Գեղարդի խաչքարի, Մատենադարանի շենքի, Սունդուկյանի անվան թատրոնի, Սասունցի Դավթի արձանի, Անի հյուրանոցի և Զերմուկի առողջարանի նկարները)։

Բավականին ընդարձակ է «Հայոց եկեղեցի» հոդվածը, որին կցված են էջմիածնի վանքի»

Հաղարծնի, Գեղարդի վանքերի, ինչպես և էջմիածնի «Ոսկե խաչքարի» գունավոր նկարները:

«Հիդրիա» հանրագիտարանի 10-րդ հատորում լույս են տեսել նաև «Հայկական լեռնաշխարհ», «Հայաստանի պատկերասրահ», «Հայկական Տավրոս», «Հայկական Առաքելական եկեղեցի», «Հայոց լեզու», «Հայոց դիր», «Հայոց Ավետարանական եկեղեցի», «Հայկական լեզու» (1916 թ. կազմավորված), «Հայկական կաթողիկե եկեղեցի» հոդվածները: Հետաքրքիր է «Հայերը Հունաստանում» ընդարձակ հոդվածը: Այստեղ ի մի են բերված բոլոր հին ավանդությունները հայերի՝ Հունաստանից Հայաստան դադարելու մասին, այդ ավանդությունների շուրջ ինչպես և հայ-հունական լեզվական ընդհանրությունների մասին ժամանակակից ուսումնասիրողների կատարած հետազոտությունների արդյունքները: Անցնելով բուն պատմությանը, Հ. Ղազարյանը միանգամայն ճիշտ VI դարի երկրորդ կեսն է համարում հայկական գաղութների հիմնադրման ժամանակը: Բյուզանդիոնում և Թրակիայում, ինչպես և հայտարարի լայն մասնակցությունը Բյուզանդական կայսրության կյանքի բոլոր բնագավառներում: Այդ գաղութների բնակչությունը ստվարացավ հետագայում, օսմանյան տիրապետության ժամանակ և հատկապես Մեծ Նեղոսից հետո, երբ Աթենքի, Պիրեոսի և այլ քաղաքների շրջանում ստեղծվեցին բազմաթիվ «հայոց»-ներ, հայկական թաղամասեր: Հոգևորում տրվում է նաև Հունաստանի հայկական գաղութի եկեղեցական, մշակութային արդի վիճակը, ՀԲԸՄ-ի և այլ բարեգործական հաստատությունների գործունեությունը և այլն:

Այսպիսով, կատարված է հսկայական աշխատանք և հույն ընթերցողն այժմ ավելի հստակ գաղափար է կազմում հայ ժողովրդի դարավոր պատմության ու մշակույթի, համաշխարհային մշակույթի գանձարանում նրա մեծածառն իր փոքր ավանդի մասին:

Վերջում ուզում ենք մի քանի ցանկություններ հայտնել: «Հայաստան» հոդվածում անտեսված XIX—XX դդ. հայ պատմագիտությունը, որի մշակած բազմաթիվ հարցեր մեծ հետաքրքրություն են ներկայացնում հենց հույն ժողովրդի, հույն մշակույթի պատմության ուսումնասիրության համար: Միայն վերջին հիշատակ տարում հսկայական աշխատանք է կատարված հունաբան դպրոցի (V—VII դդ.) գործունեության, խաղացած դերի ու հայոց մշակույթի մեջ նրա ներդրած մեծ ավանդի ուղղության: Հույն ընթերցողին ու մասնագետին հետաքրքիր է իմանալ, թե միջնադարում հույն հեղինակների ի՞նչ երկեր են թարգման-

վել հայերեն, տեղեկանալ, որ հին հույն հեղինակների բազմաթիվ գործեր (Փիլոնի, Տիմոթեոս Կուզի, Զենոն Իմաստասերի և ուրիշների) պահպանվել են հունաբան դպրոցի ներկայացուցիչների կատարած հայերեն թարգմանություններով միայն (ն. Ակինյանի, Հ. Մանանդյանի, Վ. Զալոյանի, Լ. Խաչիկյանի, Ս. Արևշատյանի, Արուսյակ Մուրադյանի և այլոց աշխատությունները):

Հույն ընթերցողին հետաքրքիր է իմանալ նաև հայ մասնագետների աշխատանքի արդյունքների մասին հելլենիզմի ուսումնասիրության գործում (Հ. Մանանդյանի, Բ. Առաքելյանի, Գ. Սարգսյանի, Ս. Կրկաշարյանի, Գ. Տիրացյանի և մյուսների աշխատությունները): Այս պրոբլեմի առնչությամբ կարևոր են հետպատերազմյան տարիներին սկսված և մինչև օրս շարունակվող հելլենիստական շրջանի հուշարձանների հնագիտական պեղումները, որոնք կարևոր նյութեր են ի հայտ բերել (Գառնիի, Արտաշատի, Արմավիրի պեղումները): Կարելի էր հատուկ խոսել ընդհանրապես ճճագիտության ձեռք բերած նվաճումների մասին: Ի դեպ, սկսվել և շարունակվում են նաև բազմաթիվ միջնադարյան քաղաքների և հուշարձանների պեղումները, որոնց արդյունքները կարևորություն ունեն Բյուզանդիայի պատմության ուսումնասիրության համար (Անիի, Դվինի պեղումները):

10 և 11-րդ հատորների հայագիտական հոդվածների վերաբերյալ կարելի է անել և հետևյալ դիտողությունները.

Հայկական գրերի գյուտի ճշգրիտ թվականը դեռևս հայտնի չէ, հայագիտության մեջ դրա շուրջ վեճերը դեռ շարունակվում են, դրա համար Ղազարյանը սխալ է նշեր թվականներից մեկնում մեկը, ցույց տալով, որ կան տարրեր կարծիքներ և ոչ թե ընդունելու ու նշեր մի քանի թվական (393, 391, 406, 405—406 թթ.):

Հայկական եկեղեցում մինչև հայկական գրերի գյուտը արարողությունը կատարվում էր ոչ թե ասորեոստանյան (ܐܪܡܝܐܝܐ) լեզվով, այլ ասորերեն (ܐܪܡܝܐ), ասորեոստանյան այբուբեն գոյություն չունի, կա ասորական այբուբեն (հատոր 10, էջ 391, 403): 11-րդ հատորի 402-րդ էջում ասված է, որ սելջուկների կողմից Անիի գրավումից հետո հայոց կաթողիկոսությանը տեղափոխվեց Աշտիշատ: Նշենք, որ Անիի դադարեց կաթողիկոսանիստ լինելուց դրանից քսան տարի առաջ, բյուզանդացիների կողմից քաղաքը գրավվելուց հետո: Պետրոս Գետադարձ կաթողիկոսը կաթողիկոսանիստ դարձրեց Սեբաստիայի Սուրբ Նշան վանքը, նրա հաջորդ

նախկին Ռ Աննեյին՝ Տարնտայի Թավրուրը, Գրիգոր Բ Վկայասերը՝ Դամնդավր:

Ցանկայի էր հին Հայկական այն անունները, որոնք հնում ունեցել են հունարեն համարժեքներ, բերվելին այդ ձևով և ոչ ժամանակակից արևմտահայերեն արտասանությամբ:

Ցանկայի էր նաև, որ հայերեն տերմիններին կից, փակագծերի մեջ տրվեց նրանց հունարեն թարգմանությունը: Այդ բանը կատարված է.

բայց հաղվադեպ (թարգմանված են Թիֆլիսի հայ թերթերի անունները):

Նշված թերմինները, որ անխուսափելի են նման մեծածավալ աշխատանքում, որակ չեն կազմում, հեշտությամբ ուղղելի են: Մնում է ցանկայի, որ Հ. Ղազարյանը նույն ոգևորությամբ ու պատասխանատվության զգացումով շարունակի իր շնորհակալ աշխատանքը:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐՔԻՎՅԱՆ

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԾԱՐԹԵՔ ՀԱՎԱՔԱՍՈՒՆԵՐ

1980 թ. հունվարի 25-ին ներանում բացվեց Հայկական ՍՍՀ-ում առաջին դրամագիտական ցուցահանդեսը: Դրամագիտությունը, որը նվիրված էր շուրջ 300 տարվա դրամագիտական մասնագիտությանը, որպես գիտական մտքի ասպարեզ մեղանում նոր է: Դրամագիտական նյութերի ցուցադրությունը երախտագիտության ու հարգանքի տուրք էր բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են բերել և շարունակում են նպաստել Հայկական ՍՍՀ-ում դրամագիտության դարգացմանը, Յուդահանդեսում ներկայացված էին հին և միջնադարյան մետաղադրամները ու մեդալները բազմաթիվ նմուշներ: Հիրավի, աշխարհի բոլոր երկրները չեն, որ կարող են ներկայացնել հին հունական պոնիսներին, արևմտեկյան իրանին, Ալեքսանդր Մակեդոնացուն, հռոմեական, սարթեմական, սասանյան ինքնակալների, Բյուզանդական կայսրության, արաբական խալիֆայության, սելջուկյան պետությունների, Կիլիկիայի հայկական թագավորության, մանդլական խաների և շատ այլ բազմաթիվ արձանագրություններով ու պատկերներով թողարկված դրամաների բնորոշ տիպերը:

Դրամագիտական այդ նյութերը Հայաստանին նվիրել են Ադնիկ Գարագաշյանը (Բուսի-նիա, Բուխարեստ), Զարեհ Պաուկյանը (ԱՄՆ, Նյու Յորք), Արմենակ Փոլադյանը (Կիբանան, Բելյուր), Փառանձևե և Գեղամ Գալաճյանները (ԱՄՆ, Նյու Յորք), Հասմիկ և Նրվանդ Ամաստունները (ԱՄՆ, Ֆիլադելֆիա), Նապոլեոն Բրյուկյանը (Ֆրանսիա, Լիոն), Նրվանդ և Ֆոն-Ֆոն Ալլեյանները (Ֆրանսիա, Նիո), Հայկ և Թորգոմ Ղազարյանները (Խաբա, Սան Ռեմո) և ուրիշներ: Վերջին ժամանակներս հավաքված շուրջ 17000 դրամներից ու մեդալներից ընտրվել էին հազարից ավելի նմուշներ, որոնք և ներկայացնում էին Ափյուրի հայերի նվերները մայր հայրենիքին նրա վերածննդի 60-ամյակի շնամբ: Այդ նյութերը հնարավորություն ընձևեցին կազմակերպելու

մի այնպիսի ցուցադրություն, ուր ներկայացված էին Միջերկրականի արևմտյան կողմերից մինչև Հնդկաստանի հյուսիսն ընդգրկող երկրներում պատմական տարբեր դարաշրջաններում թողարկված դրամական միավորները: Դրանց կշռային չափերը, պատկերները ու մակագրությունները հաղորդած տվյալները, շրջանառության ոլորտներին, ինչպես նաև առանձին գինաստիանների ծագմանը վերաբերող վկայությունները կարևոր նշանակություն ունեն պատմական շատ հարցերի պարզաբանման համար:

Մի կողմ թողնելով մանրամասնությունները, հարկ ենք համարում խոսել ցուցադրված ժողովածուներից մի քանիսի բովանդակության մասին: Հիշատակության արժանի է Եգնիկ Գարագաշյանի (Բուխարեստ) հին հունական ոսկի ու արծաթե դրամների հավաքածուն, որի շնորհիվ կարելի է տեսնել մ. թ. ա. VII—V դդ. վերաբերող դրամական միավորներից առանձին նմուշներ, թողարկված Եգնյան ծովի ավազանում, ինչպես նաև Փոքր Ասիայի հունական վաճառաչա՞ քաղաքներում: Եթե նկատի առնվի, որ հաստատուն կշռային չափերով, պետականորեն վավերացված մետաղե դրամները առաջին անգամ հանդես են եկել հին հունական քաղաքակրթության ոլորտում մ. թ. ա. VIII—VII դդ. տահմանագրված, ապա պարզ կդառնա այն ներդրման արժեքը, որ ի դեմս Եգնիկ Գարագաշյանի կատարել է հունական հաղթող շախմատ Հայաստանում վրամագիտության դարգացման ուղղությամբ: Այսօր հին աշխարհի դրամներով այնքան հարուստ կովկասյան երկրներից միայն Հայաստանում են պահվում Եգնյան ու ատտիկյան կշռային համակարգին պատկանող վաղագույն դրամական միավորները: Բուն Ատտիկայի, Պելոպոնեսի, Մակեդոնիայի, Թրակիայի և հին հունական այլ երկրամասերում թողարկված դրամական ու հելլենիստական պատկերագրության դրամաներից, անտրադրամներին ու սոլիդների բազ-